

« Գիտեմ, Տէր հայր, հերիք այդքան վարդապետութիւն պիտի ասես ինձ. մի նամակի միջոցով, հերիք է քո խորհրդով ազատեցիր ինձ խօսի մի նամակի յառաջարկում: Բայց ոչ, ոչ այնքան ազգայնորէնէն եմ խօսում, որքան մարդաւորութենէն. և մի ճար ու ճարակ զբաղեցրեալ ծայրագոյն աստիճանի խորագրաւ ծոցութենէն: Ինչ որ անենք Հայաստանացոց մտաւոր զարգացման համար անօգուտ վատասակ է, մինչև որ նրանց հարկարանցներու մի աղբիւր, մի ճամբայ չենք դնել, առանց արդարութեան չկայ ապահովութիւն առանց ապահովութեան չկայ հարստութիւն և առանց այդ հարստութեան կուտակմանը չկայ որ և է լուսաւորութիւն (թէ հին և թէ նոր լուսաւոր ազգաց) լուսաւորութեան պատմութեան զրբերը բաց արա՛, կարդա՛, կը տեսնես՝ որ նախ հարստացել և ապա լուսաւորուել են, այդպէս են եղած հընումը Եգիպտոս, Հելլադա և Իտալիա, այդպէս են եղած և նորումս Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա և Իտալի (եւ): Բայց դու պիտի ասես ինձ թէ՛ կարիքն է շարժառիթ արուեստներն և գիտելիքն և զԵրկանքն է սկզբնապատճառ ճարտարաւորութեան և հնարարութեան: Ախ Տէր հայր, Հայաստանում կայ ոչ ընկերական կեանք, բռնութեանց ու ձեռնանք երեսն ցաւելով եմ ասում, կայ ոչ ընտանիք: Հայաստանցիքն դեռ պատանի աւանդանում է մի իրապէս դեռահաս կնոջ հետ: Այդ կին բերան կապած քիկալով անխօսուել մի կենդանի է, զաւակունք ծնում են, հայրն իր զաւակը ոչ խոտում է, ոչ վայելում, հայրն ու մայրն և զաւակունքը, աղջիկ և մանջ սեղանակից չեն լինում իրար հետ: Տարիներով բերան և երես պահում են իրարմէ, կին և աղջիկ դատարարութեամբ են տանը մութ խցում փակուել և աղայ մարդոց ոչ երևիլ և ոչ խօսիլ: Այդպէս տեսայ Վանայ մէջ և դեռ ևս ուրիշ տեղեր: Մարդկային ազգի ֆրիւտտալիզմը դարձրել որ է ընտանեկան կեանքը վերացել է կարծող և վառայ մէջէն. ուր տեղ արք և կանայք, մանչ և աղջիկ խօսիլ խօսիլ պէտք է սորվին, կեանք և սէր վայելեն. ընդհակառակն այստեղ մարդն առանձին իրան համար է ապրում, կինն առանձին բերանը փակ ինքնիրան աճում, հետեանք, կոշտակաւ վարք և խօսք. քնքուշութիւն, ճաշակ և արիւնկանութիւն, պարթեական կամ ըստ Եւրոպացւոց ասպեւտական ձև և կերպ բոլորովին կայ ոչ իրանց մէջ:

Եթէ երկու խօսք անեն, «մինը՝ ծառայ եմ Սրբազան կամ Սրբութեանդ է, այդ ասուելը այնքան իրանց մէջ սովորական է եղել, որ շատ անգամ պատահեց որ վարդապետներն անգամ ինձ՝ քո սրբութիւնը և սրբազան, ասացին ինձ: Մի խօսքով, երբ մի ժողովուրդեան մէջ ընտանեկան կեանք կայ ոչ, այն ժողովուրդն ոչ ընտանեկանութեան, ոչ ընկերայնութեան, ոչ ազգայնութեան, ոչ գեղեցկասիրութեան և ոչ կրօնասիրութեան լոյս զգացում է ունենում: Այդպէս տեսայ կարին և Վանայից տեսայ ևս տեսած եմ երբեմն Երզնկում, Գարեբերդում, Տիգրանա կերտում, Լեւոն, միսթարուիքը որ գիւղերումն են գտնուում հին Հայկական կեանք, որոնց միջոցով արք և կանայք հաւասար աշխատող լինելով քիչ շատ հաւասար իրականացնում են եղած իրար նկատմամբ: Հետեւաբար էլ տարազանութիւն և խորագէտ մարդիկ նրանց միջումն են ծնում:

Տէր հայր, ինչպէս կարող էք հեշտութեամբ իմանալ, այդ է իրանց յետաւանդութեան ներքին պատճառը: Հիմա տեսնենք և մի քանի արտաքին պատճառներ իրանց յետաւանդութեան: Այդ երկու քաղաքներում նոյնպէս և իրանց զիւրեղեւոր օրական ապրուստը սաստիկ աժան է, այնպէս որ կարենային էլ Վանային էլ օրէնք երեք զրոյ կրնայ ապրիլ իւր հաշտութիւն ու կացարանովը, հացն աժան ու ընտիր, ուստի և ամեն բան ըստ այնմ: Եթէ Վանայից կամ կարենայից քաղաքում են գտնուում Պոլսի գրամշակներ, չգիտենաւ որ անօթութենէն ըստիւրուած են անուր այդ, հապա միանգամ քաղցրացում: օրինակ է մտել իրտնց մէջ բաղդալանդութեան և այդ օրինակին հետեւողներ գնալով բաղդալանդ են,

քանի քրդաց հարստահարութիւն և կառավարողաց զոյաքաղութիւն աւելացել են: Մեր Հայաստանցու հանճարի և կեանքի վրայ մի ամենամեծ վատեցրածութիւն անօղն է եղել քրդաց զինուորութեամբ, օրէնքէ ցուրտ, անկախ որ և է ընկերային և քաղաքային կապէ լինելը: Քուրդն երկրին հետ կապուած չէ, որովհետեւ մի միայն հովիւ և խաշնարած է: Հոյակապ տուն տեղ ունի ոչ, ձմրան հովիտում, ամրան կանանչ սարերումն է ման գալի իր պարեկաւորովը: Մինչդեռ Հայաստանցիքն երկրամարդ և մնայուն կեանք վարող, սարուի է եղել բռնավարի նրա զինու ահուց: Այդ ամենավատ ներգործութեան վրայ եկել աւելացել է և կառավարողաց ատեցողութիւնն ու խռութիւնը: Փոխանակ Քրդաց վատ ներգործութեան մի հակադրործողութիւն աւելու և մի կերպով փոխարինելու, ընդհակառակն տիրողն ազգն ու կառավարութիւնը Քրդաց հետ դաշնակից է եղել և նրա վատ ներգործութեան օգնական: Ուր կը մնայ մեր խեղճ Հայաստանցու սրտումը և մտքումը ընտանեկան, մարդկային և ազգային զգացմունք և գաղափար: Իրրն հրաջեւ եմ նկատում նրանց մէջ տեսած հայաստասիրութեան հոգին և իրանց վատ դրութենէն պրծնելու ջանքն ու յոյսը: Հայաստանցու մի միսթարական կողմն այն է որ՝ քաղ գիտէ իր վիճակին անտանելի լինելը և թէ այդ հանգիստը համար չէ եկած աշխարհումս, և յոյս ու հաւատ ունի լաւ օրեր տեսնելու, ազատ կեանք վարելու, ևս: Այդ զգացումն յիշուել, Տէր հայր, զարմանալի է, որն որ յետնագոյն գեղացու մէջում անգամ նկատեցի: Բաւական երկար խօսեցայ, գիտեմ. բայց ահա՛ այդ վիճակունքն եղող Հայաստանցուն դարման տանելու մտածելը, և ինչպէս անել էր ինձ նամակումդ. թէ Տէրն օգնական լինի քեզ: Արեւայ որ եղաւ ինձ՝ Հայաստանցու փրկութեան դուռը ցոյց տալով ինձ, որն որ հիմա էլ ես՝ ձեզ շանց պիտի տամ:

Մեծացեալ յազգայնական

Պոլսի 19 յուլիս 1878

... Տէր Մատիւ լրագրող.

Տաճկաստանի և մանաւանդ ազգայնոցս դժբաղդ վիճակին վրայօք՝ Եւրոպական լրագրող մէջ հրատարակեալ ամենատարբեր լուրերուն վերայ իրար փոխանակման ցաւակցելուն, յօժարեալամփոթացի աստ՝ հասարակութեան կենսական պիտոյի յիշ ծանօթանալու և ձեռքս եկած էական և գործնական ազգասիրութիւնը մերայնոց անձնուէր մատուցանելու համար, հաստատ յուսալով և քաջ համազօղալ ըլլալով որ՝ այս անցած անիծեալ և ահարկու օրերուն պիտի յաջորդեն բարեբաւտիկ օրեր, եթէ ամենքս ալ մեծ ու պղծ տիկ մեր ամեն ջանքերն ի գործ դնենք՝ մեր մասնաւոր և հաւաքական վերականգնման համար: Ստակայն այժմեան գեղեցիկ եղանակիս պատճառաւ ազգայնաց աստանդական կեանքը՝ Պոլսոյ արգէն ունեցած տեսակցութեան և ժողովուրդի զժողովուրդի մասնաւոր մ'ալ աւելի սաստկացնելուն, կատարելով Ձեր ազգօգուտ լրագրողի ասպնջական էջերուն գիւմը՝ ազգայնոցս երկու առաջարկութիւն ընելու համար:

Ա. Հորկաւ մէկ կողմէն Տաճկաստանի այժմեան վիճակն երկրաշուքի Եւրոպացւոց վրայ ունեցած վրաստահութիւնը կարի քիչցոյցած է. միւս կողմանէ ալ Եւրոպական տարանց հրապարակիս վրայ խիստ նուազելուն պատճառաւ՝ մեր ազգային վաճառականք պէտք և օգուտ մեծ ունին զանոնք բերել տալ: Հետեւաբար ստիպուած են կանխիկ ստակով և կամ ապահով միջոցներով իրենց հրամաններն Եւրոպոյ վաճառականաց կամ միջնորդաց զրկել:

Արդ՝ իմ հանրածանօթ երեսնամեայ բնակութիւնս ի փարիզ և ճարտարապետական մեծագոյն զարգացող գործարանի միջոցաւ բաւական գոհացուցիչ կանցողովարութիւնս՝ կը ներեն ինձ աշխարհի մէջ ազգայնոցս շահուէտ կերպով օգնել, վերջինս ազգայնաց զօշորով:

Ուստի դեռ տասնե հինգ օր մը Պոլսի եմ և ուզողը կրնայ զիս զտնել ամեն հինգ շաբթի, ուրախութեամբ յաւաքով սրբել Միսթիս իմն Ս. Սիդրոսեան ընկերութեան սենեակը և կամ ուղղակի թղթակցիլ ի փարիզ, Ուն-Պոլսի 59 փողէ, թէքն փարիզու այս տարուան աշխարհահանգէսը մեծ առիթ կընծայէ ինձ հոս անցած ամեն կերպ ապրանաց նորանոր և շահաւորագոյն աղբիւրները գտնել, նոյնպէս մեր երկրին բերքերուն մինչեւ հիմայ անծանօթ հրապարակներ և գործածութիւններ հայթայթել:

Բ. Ծատ կը վաճառքիմ որ ճշմարիտ և գործնական գաղափարներով զարգացեալ ազգասէր ընկերութիւն մը հաստատեն, և բանուկ արհեստներն ազգին մէջ տարածելու համար՝ արհեստի լաւ յարմարութիւն ունեցող 14—15 տարեկան աղայք փարիզ զրկեն, ուր ես հայրական ամեն իմամբ անոնց վրայ տանելու և զանոնք երևելի գործարանաց մէջ դնելու կը խոստանամ՝ ձերապէս և ի սէր ազգին, անանկ որ քիչ ժամանակէն կարենան օրապահիկին հանել: Այս խնդիրն ընդարձակ մեկնութեանց կարօտ չէ և լուրջ մտաց համար արհեստներուն մեր մէջ տարածուելէն առաջ քալիք ամեն օգուտներն ակներես են:

Յուսալով որ պիտի բարեհաճիք այս նամակս Ձեր պատուական լրագրին մէջ հրատարակել Ձեր սովորական բարեօրոյթութեամբ, կանխիկ շնորհակալութիւններս մատուցանելով,

Մնամ անձնուէր Ձեր Թանգալի Թէյ-Եփեմ

... Խմբագրատեղ Տէր.

Միզպուրեան երկսեռ վարժարանի տարեկան հարցաքննութիւններն աւարտեցան:

Յիշեալ բարեհաճաւ վարժարանի իւր բարեջան հիմնադրին աշխուրջ հսկողութեանը շնորհիւ՝ իր հաստատութենէն ի վեր կրցած է օգտակար ըլլալ, որով իւրաւամբ զրաւած է ազգայնոց վատահոլութիւնն ու համակրութիւնը:

Ողջ և հաստատուն ապրանքի տէր վաճառականի նման՝ Միզպուրեան էֆէնտի իւր հիմնադրած վարժարանին շուքն ու համալը նորա բարեւոյ ընթացիցն ու կանոնաւոր ուղղութեանը մէջ բարձրացնելու ջանացած է, յաւէտ զգուշանալով կեղծ ու սրտիւր ցոյցերէ և շաղկարատութենէ, որք ձեռնարկութեան մը ներքինը ծածկելու և արտաքին և եթ չըպարելու կը ծառայեն:

Ահա այսպէս Միզպուրեան էֆէնտի իր լրմատութեամբն ու հաստատամիտ և յարատեղ բնաւորութեամբ երկար տարիներէ ի վեր կրցած է գեր վարժարանը բարեկարգ և նախանձել վիճակի մէջ պահելով արդիւնաւոր ընել:

Բնաւ չկարծուի թէ սրբեալ նսրատակաւ մը կը գրեմ այս տողերը. բայց է աւստիկ վարժարանն ամենուն համար, և կրնան կատարեալ ապատեթեամբ քննել և ըստ այնմ դասուել:

Իմ գիտցածս՝ զոր հրապարակաւ կը քարոզեմ, այս է:

Նոյն վարժարանին նախադաս է ուսուցանել իրօք առանց մոլեռանդութեան, հաւատք առանց նախապաշարման, ազատութիւն առանց ապրաքսանութեան և ուսում առանց իմաստականութեան:

Այս քեզեցիկ արդիւնքն արդէն վաճառական

զուց տեսնուած էր, և ահա այս անգամ տարեկան քննութեան առթիւ դարձեալ տեսնուեցաւ երկսեռ ուսանողաց վրայ, որ ստուգիլ գոհութեան արժանի է և մեծ պատիւ կը բերէ բարեջան հիմնադրին, զոր կը շնորհաւորեմ հրապարակաւ:

Անցեալ շաբթի օր ալ Գեր. խորհրդական սրբազանի գահերէցութեամբ համեստ այլ գողտրիկ հանգչս մը տեղի ունեցաւ:

Միզպուրեան էֆէնտի տեղեկադրով մը վարժարանին վիճակն ու ուղղութիւնը բացատրեց, զոր հաճութեամբ լսեցին մեծարոյ հանդիսականք:

Յետոյ երգեց և դաշնակաց ընդմիջմամբ Հայ. Տաճկ. և Գաղ. իմաստալից ճառեր արտասանեցին Պարոնայք Յարութիւն Փափազեան, Խնդիր Սեդրոսեան, Տիգրան Շալճեան, Սրտաշէս Գալիպազեան և Սրբորդ Սանդիկ Գրիգորեան, Թագուհի Մէլիքեան և Սանդիկ Սարգիսեան:

Ասոնց յաջորդեցին մարմնամարզութեան փորձեր, որ նոյնպէս մեծ գոհութիւն պատճառեցին հանդիսականաց, որք կրկնում խնդրեցին և նոյնին դասառու նախաձեռն էֆէնտի շնորհակալութիւն յայտնեցին: Յետոյ Լուսինեան էֆէնտի մէկ ընտիր ատենաբանութեամբ վերջացաւ հանգչեւը:

... Տէր, ի խրախոյս յիշեալ վարժարանի մեծարար Տեսութեան և ի քաջալերութեան երկսեռ ուսանողաց, կը խնդրեմ որ ներկայս հրապարակել բահահաճիք:

17 յուլիս 1877

Ի Գում դարաւ

Մնամ . . .

... Խմբագրատեղ.

Կը խնդրենք որ բարեհաճիք ներկայեալ վիճակահանութեան ազգը ձեր ընտիր լրագրոյ մերձակայ մի թուով հրատարակել, ընդունելով մեր սրտագին շնորհակալիքն ձեռնարանաց ողջոյն:

1878 յուլիս 20 Մնամ աղօթարար Եֆէնտի Թէյ-Եփեմ

Ա. Զ. Գ.

Յուլիս 16 կիրակի օր թաղիս Հայկանոյ վարժարանի աշակերտուհեաց պատրաստած ձեռագործաց մէկ մասին վիճակահանութիւնը կատարուելով հետեւեալ տասն և հինգ թիւերը յահեցան:

Ա.	145	Զ.	3	ԺԱ.	48
Բ.	17	Է.	46	ԺԲ.	81
Գ.	79	Ը.	106	ԺԳ.	117
Դ.	103	Թ.	63	ԺԴ.	158
Ե.	43	Ժ.	72	ԺԵ.	97

Շահող թիւերը պէտք են մեզ ներկայել իրենց ստմներն և պարգևներն ընդունել:

Ա. Զ. Գ.

Դպրոցասիրաց-Արեւ երեսն ընկերութեան ընդհանուր ժողովը պիտի գումարի յառաջիկայ կիրակի օր 23 յուլիս, Բերա Նարեկեան վարժարան:

Ատենը պիտի բացուի ժամը ճիշդ 7ին. կը հրաւիրուին Մեծ. անդամք իւրեանց պարտաւորութիւնը կատարել

20 յուլիս 1878 Թ. Թէյ-Եփեմ

Ե. Զ. Գ.

Իսկիւ տար Եֆէնտի հալէ Գարամանլը փողոցի մէջ 9 թիւ հարկւր ութուսն կանգնուած գետին եկեղեցւոյ մէջէն ձեռք առնելով զմիջոցն հատ հարկւրոց թղթադրամի ուրիշ պայմանագրուած է, ուստի վերոյգրեալ գնէն տեղի վրա ճարողք մինչ յառաջիկայ ուրբաթ կը հրաւիրուին ի թաղ. խորհրդարան:

21 յուլիս 1878 Թաղ. խորհուրդ. Իսկ. Ս. Կրպտ. և Կեղ.

1. 2010.07.10 10:00
 2. 2010.07.10 10:00